
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ**

ԱՐՏԱԿ ԴԱԶԱՐՅԱՆ

1918 թ. մայիսի 28-ին Արևելյան Հայաստանում վերականգնվեց հայկական պետականությունը, ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը:

Նոր ծնունդ առած հանրապետությունը բախվեց մի շարք դժվարին խնդիրների, որոնց անհապաղ լուծում տալը մեծ ջանքեր էր պահանջում: Երկրի ներքին ու արտաքին բարդ մարտահրավերները լուծելու համար անհրաժեշտ էր օր առաջ դիվանագիտական կապ հաստատել հարևան պետությունների հետ և դուրս գալ արտաքին աշխարհ: Ամբողջովին մեկուսացած հանրապետության համար դա հեշտ գործ չէր, որովհետև Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները անկայուն, անորոշ ու հակասական էին անմիջական հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ՝ վերջիններիս միանգամայն տարբեր քաղաքական նպատակների, կողմնորոշումների ու տարածքային վեճերի պատճառով: Երեք պետությունների միջև կային սահմանային շատ կնճռոտ խնդիրներ, հնուց եկող փոխադարձ անվստահություն, կասկած ու երկյուղ և արմատական տարբերություն արտաքին կողմնորոշման հարցում¹:

Թշնամական թուրքիայով ու Ադրբեջանով շրջապատված Հայաստանի Հանրապետությանը առաջին հերթին անհրաժեշտ էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Վրաստանի հետ:

Վրաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի 1918 թ. հուլիսի 22-ի՝ Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում մասնավորապես ասվում էր. «Նպատակ ունենալով պահպանել բարիդրացիական հարաբերությունները Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև՝ նշանակում են Արշակ Ջամալյանին Հայաստանի կառավարության գործերի հավատարմատար Վրաստանում և նրան հանձնարարում են Հայաստանի կառավարության անունից վարել բոլոր բանակցությունները Վրաստանի կառավարության հետ, ինչպես քաղաքական, այնպես էլ ընթացիկ կյանքի (տնտեսական, իրավական) և ցանկացած այլ հարցերով, որոնք կարող են առաջանալ երկու երկրների միջև»²:

¹ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., 2011, էջ 39:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 275, ց. 5, գ. 26, թ. 5:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը ուներ հետևյալ կազմը՝ հավատարմատար Արշակ Ջամալյան, քարտուղար Վաղարշ Սահակյան, գործավար Նիկոլայ Մամիկոնյան, հյուպատոս Տ. Գիլգալյան, ինֆորմացիոն բյուրոյի պետ Ա. Մալխասյան³: Ահա այս կազմով ներկայացուցչությունն անցավ իր պարտականությունների կատարմանը:

Հայաստանի կառավարությունը 1918 թ. հուլիսի 26-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին հրահանգավորեց հետևյալը.

1. Թիֆլիսում Հայաստանի միակ պատասխանատու ներկայացուցիչը Վրաստանի կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչն է, որի մասին տեղյակ է պահվում Վրաստանի Հանրապետության պետական կառույցներին, արտասահմանյան միասիաներին:

2. Թիֆլիսում հայկական առանձին մինիստրությունների ֆինանսական, զինվորական գործակալները և այլք, ինչպես նաև պարենավորման և այլ կոմիտեների ներկայացուցիչները համարվում են հայկական ներկայացուցչության բաղկացուցիչ մասը:

3. Թիֆլիսում հայկական մինիստրությունների առանձին ներկայացուցիչները նշանակվում են Հայաստանի կառավարության կողմից՝ համապատասխան նախարարի և դիվանագիտական ներկայացուցչի համաձայնությամբ:

4. Երկրորդ դրույթում հիշատակված բոլոր տեսակի հարաբերությունները ինչպես վրացական նախարարությունների և արտասահմանյան միասիաների, այնպես էլ հայկական կառավարության հետ տեղի են ունենում Հայաստանի դիվանագիտական միասիայի միջոցով

5. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին իրավունք է տրվում վերահսկողություն սահմանել հայկական ներկայացուցչության մաս հանդիսացող բոլոր անձանց և հաստատությունների նկատմամբ (դրույթ երկրորդ):

6. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին իրավունք է տրվում նաև հայկական կառավարությանը տեղյակ պահելու Թիֆլիսի առանձին մինիստրությունների ներկայացուցիչների ծրագրերի մասին, դրանց վերաբերյալ եզրակացություններ անելու:

7. Ինչպես միասիայի խորհրդականը, այնպես էլ մյուս պաշտոնատար անձինք նշանակվում են Հայաստանի կառավարության կողմից դիվանագիտական ներկայացուցչի առաջարկած թեկնածության հիման վրա: Միասիաները ձևավորում է անմիջապես դիվանագիտական ներկայացուցիչը:

8. Նախքան հայկական հյուպատոսական կառույցների ստեղծումը Վրաստանում հյուպատոսի պարտականությունները ևս իրականացնելու էր Հայաստանի դիվանագիտական միասիան: Ընդ որում՝ դիվանագիտական ներկայացուցչին իրավունք էր տրվում հյուպատոսի պարտականությունները Վրաստանի առանձին քաղաքներում հանձնարարելու առանձին անհատների՝ սեփական հայեցողությամբ:

³ Տե՛ս նույն տեղը, գ. 40, թ. 16:

9. Դիվանագիտական ներկայացուցչի հիվանդության կամ բացակայության դեպքում նրա պարտականությունները դրվում են միսսիայի խորհրդականի վրա⁴:

Պարզվում է, որ մինչև իր հավատարմագրերի հանձնելը, այսինքն՝ 1918 թ. հուլիսի 22-ը, Արշակ Ջամալյանը հանդիպումներ էր ունեցել Վրաստանի կառավարության ներկայացուցիչների հետ: Այդ մասին է վկայում 1918 թ. հուլիսի 26-ի արտաքին գործոց մինիստրությանը նրա հղած նամակը. «Իմ հավատարմագրի առաքումը կարող էր ուշանալ, իսկ ընթացիկ գործերը ստիպողաբար պահանջում էին օր առաջ դիվանագիտական կապ հաստատել վրաց կառավարության հետ, այս ամսի 7-ին ներկայացա Մինիստր-Նախագահ Ժորդանիային (Արտաքին գործերի մինիստրը բացակա էր քաղաքից), որին ազգային խորհրդի նախագահ պ. Սահակյանը վերջին տեսակցության ժամանակ արդեն հաղորդել էր իմ նշանակման մասին:

Պ. Ժորդանիային ես ասացի, որ Հայաստանի կառավարությունը ինձ վրա դրել է բացի ընդհանուր դիվանագիտական հարաբերությունները պահպանելու գործից. նաև երկու առանձին խնդիր. առաջին՝ մեր գաղթականների և ապա՝ պաշտպանությունը այն ստացվածքի, որ Հայոց ազգային խորհուրդը, կամ նրան ենթակա զինվորական և քաղաքացիական հաստատությունները թողել են Վրաստանում:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պ. Ժորդանիան ընդունելության ժամանակ իր «գոհունակությունը» հայտնեց, որ Հայաստանի կառավարությունը ինձ է հանձնել իր ներկայացուցչի պաշտոնը, հետևաբար և վրաց կառավարության կողմից առարկություն լինել չի կարող այս խնդրում, այս ամսի 23-ին նամակներով տեղեկացրի նշանակվելուս մասին այստեղի դիվանագիտական կորպուսների անդամներին՝ թուրքերի երկաթուղային վարչության ներկայացուցչին, ռուսաց ազգային խորհրդի պ. Նախագահին, և ուկրաինական ռադայի պ. Նախագահին»⁵:

Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության բաղկացուցիչ մասն էր ինֆորմացիոն կամ տեղեկատվական բյուրոն, որի հրատարակած տեղեկագրերը լույս են սփռում տվյալ ժամանակահատվածում դիվանագիտական միսսիայի գործունեության գրեթե բոլոր ոլորտների վրա: Ինչպե՞ս ստեղծվեց տեղեկատվական բյուրոն, ի՞նչ նպատակ էր հետապնդում և ինչպիսի՞ գործունեություն էր ծավալում: Բյուրոյի վարիչ Մալխազովի՝ արտաքին գործերի նախարարին ուղղված բացատրական գրության մեջ մանրամասնորեն ներկայացվում են բյուրոյի գործունեության ոլորտներն ու հիմնական նպատակները:

«Ինֆորմացիոն բյուրոն, որն այժմ գործում է Վրաստանում դիվանագիտական միսսիային առընթեր, նախապես հիմնադրվել էր Հայոց Ազգային խորհրդի կողմից Հայաստանի կառավարության ռազմական գերատեսչության կազմում և նպատակ ուներ համակարգել ու կենտրոնացնել

⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 26, թ. 128:

⁵ Նույն տեղում, գ. 36, թ. 15:

Հայկական Կորպուսի զորամասերի մասին ամբողջ տեղեկատվությունը: Դրանից բացի այն նպատակ էր դնում ամբողջացնել հայկական զորամասերի ռազմական գործունեության մասին տեղեկությունները և իրադարձությունների ոչ ճիշտ լուսաբանման դեպքում հանդես գալ պաշտոնական հերքումներով: Բյուրոյի այս կառուցվածքը հաստատվել էր Ազգային Խորհրդի 1918 թ. հուլիսի 3-ի որոշումով»⁶:

Ազգային խորհուրդը, 1918 թ. հուլիսի 16-ի նիստից հետո ինֆորմացիոն բյուրոն համարելով պատմականորեն անհրաժեշտ հաստատություն, որոշեց այն հանել զինվորական նախարարության տնօրինությունից և փոխանցել Վրաստանում դիվանագիտական առաքելության ենթակայությանը, մինչև հանրապետության կառավարությունը կորոշեր նրա մշտական տեղակայման վայրը: Այսպիսի փոփոխությունների ենթարկվելուց հետո բյուրոն փոքր-ինչ ձևափոխվեց. այն շարունակում էր հնարավորինս տեղեկություններ հավաքել սպանվածների, վիրավորների և անհայտ կորած զինվորների մասին: Բյուրոն, ընդլայնելով իր գործունեությունը, միաժամանակ դարձավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև փոխհարաբերությունների առանցքակետ: Ամեն շաբաթ ներկայացվող բյուլետենները պարունակում էին հարուստ տեղեկատվություն այդ երկրների ներքին ու արտաքին քաղաքականության, Հայաստանի Հանրապետության հետ նրանց փոխհարաբերությունների, ինչպես նաև Թուրքիայի դիրքորոշման վերաբերյալ: Բյուրոն նպատակ էր հետապնդում իրադարձությունների և հայ ժողովրդի վիճակի մասին անմիջականորեն իրազեկել Հայաստանի կառավարությանը և Կ. Պոլսի ու Բեռլինի պատվիրակներին:

Ակնհայտ է, որ թեև ինֆորմացիոն բյուրոն առայժմ տնօրինում էր Վրաստանում Հայաստանի դիվանագիտական միսիան, այդուհանդերձ այն գործ ուներ ոչ միայն Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների, այլև Ադրբեջանի հետ և նյութեր էր մատակարարում Կ. Պոլսի, Բեռլին և Ռուսաստան:

Տեղեկատվական բյուրոյից բացի՝ դիվանագիտական միսիային կից գործում էր նաև ֆինանսատնտեսական հանձնաժողով, որի ստեղծման և գործունեության մասին է վկայում հետևյալ տեղեկությունը. «Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից ստեղծվում է ֆինանսատնտեսական կոմիտե քննարկելու և մշակելու Հայաստանի Հանրապետության ժողովրդատնտեսական կյանքի կարգավորման հետ կապված հարցերը և ցանկալի տնտեսական փոխհարաբերությունների հաստատումը օտարերկրյա պետությունների հետ»⁷:

Այս նպատակի իրականացման համար ֆինանսատնտեսական կոմիտեն պետք է.

1. Հայաստանի կառավարության հանձնարարությամբ և իր նախաձեռնությամբ քննարկեր ու մշակեր ֆինանսական մտահղացումների և մի-

⁶ Նույն տեղում, գ. 12, թ. 209:

⁷ Նույն տեղում, գ. 88, թ. 81:

ջոցառումների նախագծեր, ինչպես նաև կառավարության գործունեությանը վերաբերող հարցեր, որոնք ուղղված կլինեին ազգային տնտեսության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, հաղորդակցության ուղիների, կրեդիտային և ֆինանսական գործերի ոլորտների կարգավորմանն ու զարգացմանը:

2. Մշակեր օտարերկյա պետությունների հետ դրամական շրջանառության հարցերով հնարավոր համաձայնությունների ծրագրերը, առևտրային քաղաքականության, արտաքին ապրանքափոխանակության, հաղորդակցության ուղիների, փոստային, հեռագրային և այլ կոնվենցիաները:

3. Հավաքեր և համակարգեր Թիֆլիսում գործող տարբեր գերատեսչական հաստատությունների հետազոտությունները, որոնք վերաբերում էին Հայաստանի Հանրապետությանը:

Դիվանագիտական միսսիայի կարևորագույն գործառույթ իրականացնող մարմինը՝ հյուպատոսական բաժանմունքը, իր գործունեությունը սկսել է 1918 թ. օգոստոսի 19-ին: Հիմնադրման առաջին օրերին նրա պաշտոնյաների կազմը բաղկացած էր կառավարչից, գործավարից և ծառայից: Օգոստոսի մեկից հյուպատոսական բաժանմունքում բացվեց փոստային մաս: Կարճ ժամանակ անց այցելուների թիվը այնքան շատացավ, որ պահանջ զգացվեց ավելացնելու աշխատողների թիվը: Յուրաքանչյուր նոր աշխատողի ընդունելություն կամ ազատում կատարվում էր միսսիայի կառավարիչ պ. Ջամալյանի կարգադրությամբ⁸:

Արդեն հոկտեմբերի երկրորդ կեսից հյուպատոսական բաժանմունքի պաշտոնյաների կազմը բաղկացած էր հետևյալ անձերից. հյուպատոս՝ Տ. Գիլզալյան, անձնագրային մասի վարիչ՝ Վ. Քաջագունի, փոստային մասի վարիչ՝ Պ. Պետրոսյան, սուրհանդակ՝ Լ. Գիլզալյան և այլն:

Այսպիսով, նորանկախ Հայաստանի Հանրապետությունը իր առաջին ներկայացուցչությունը ստեղծեց Վրաստանի Հանրապետությունում, որը առանձնահատուկ տեղ զբաղեցրեց Առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ: Բանն այն է, որ երբ Առաջին Հանրապետությունը մյուս երկրներում նույնպես հիմնեց դիվանագիտական և այլ ներկայացուցչություններ, նրանց կապը Հայաստանի առաջին Հանրապետության հետ տեղի էր ունենում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչության միջոցով: Ուստի ցանկանում ենք շեշտել, որ ներկայացուցչության հիմնումը Վրաստանում արտաքին քաղաքական անհրաժեշտություն էր:

АРТАК КАЗАРЯН – Создание дипломатического представительства Первой Республики Армения в Грузии. – 22 июля 1918 г. в Тбилиси начало работать дипломатическое представительство Республики Армения – незаурядное событие для изолированного от внешнего мира молодого государства. Зажатая с двух сторон между враждебными ей Турцией и Азербайджаном, Первая республика стремилась прорвать изоляцию и установить дип-

⁸ Տե՛ս նույն տեղը, գ. 88, թ. 81:

ломатические отношения с другими странами. Первой в их ряду стала соседняя Грузия. Открытие в её столице армянского дипломатического представительства заняло важное место в истории внешней политики нашей страны.

ARTAK GHAZARYAN – *The Establishment of the Diplomatic Representation of the First Armenian Republic in Georgia.* – The establishment of the Diplomatic representation of the First Armenian Republic in Georgia in 1918 on July 22, was an important event for the First Republic separate from the world. Blockated by Turkey and Azerbaijan the First Republic was eager to establish relations with other countries. Georgia was the first country that the First Republic of Armenia established diplomatic relations with. Further we'll see its special role in the foreign policy of the First Rpublic.